ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/150» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Մամուլյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Գրիգորյան, Գ. Դալլաքյան, Մ. Կարապետյան, Տ. Պողոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

1. Գնահատող հանձնաժողովի նիստի /բանակցությունների/ մասին

/ Ն. Մամուլյան /

1.1. - վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321/1 սենյակ, -օրը՝ 07.08.2020թ, ժամը՝ 16:30

1.2. Գնահատող հանձնաժողովը վերագնահատեց ներկայացված հայտերը և որոշեց ուժը կորցրած ճանաչել N 2 արձանագրության 2.2 կետի 2-րդ ենթակետը և N 3 արձանագրության 1.2 կետը շարադրել հետևյալ կերպ.

-Ընդունել ի գիտություն, որ մասնակիցների կողմից շտկվել են անհամապատասխանությունները: Գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 42-րդ կետով, որոշեց N 2 Արձանագրությունում նշված մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

1.3 «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/150» ծածկագրով գնման ընթացակարգի մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին Դանինի ՍՊԸ-ի Հայաստանյան մ/ճ-ն 7-րդ չափաբաժնի մասով նվազեցրել է գինը 10 ՀՀ դրամով, առաջարկած գինը կազմել է 5750 ՀՀ դրամ:

1-ին չափաբաժնի մասով մասնակիցների կողմից նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն հայտարարել չկայացած:

3. «Գնումների մասին» օրենքի պահանջների համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց, որպես բավարար գնահատված հայտեր և ընտրված մասնակիցներ հայտարարել՝

4, 7-րդ չափաբաժնի մասով **Դանինի ՍՊԸ-ի Հայաստանյան մ/ճ -ն**

3, 8-րդ չափաբաժնի մասով **Պետրոսյան Հոլդինգ ՍՊԸ -ն**

2, 9, 10-րդ չափաբաժնի մասով **Էկոմիքս ՍՊԸ -ն**

5, 6, 11-րդ չափաբաժնի մասով **ԲԼԱՄՄՈ ՍՊԸ -ն**

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4.. Գնահատող հանձնաժողովը որոշեց «Գնումների մասին» օրենքի պահանջների համաձայն հայտարարել անգործություն /5 օրացուցային օր / և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Հանձնաժողովի. Նախագահ՝		Ն. Մամուլյան
Անդամներ՝		Մ. Գրիգորյան
		Գ. Դալլաքյան
		Մ. Կարապետյան
		Տ. Պողոսյան
Քարտուղար՝		Ի. Եղիազարյան